

Ա. Իսաբեկյան. «Մտավորականը չպետք է կողքից հետևի երկրում տիրող քաղաքական գործընթացներին, այլ ինքը պետք է ստանձնի իր բաժին պատասխանատվությունը» - ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ, 17.02.2007

«Լինում են ժամանակներ, երբ մտավորականը, արվեստագետը չպետք է կողքից հետևի երկրում տիրող քաղաքական գործընթացներին, այլ ինքը պետք է մասնակցի եւ ստանձնի իր բաժին պատասխանատվությունը երկրի բարգավաճման գործում,- նման դիրքորոշմամբ հանդես եկավ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր, նկարիչ Արամ Իսաբեկյանն՝ այսօր տեղի ունեցած մամուլի ասուլիսում: Նշելով, որ ինքը ներկայումս ոչ միայն աջակցում է «Բարգավաճ Հայաստանե կուսակցությանն, այլ նաեւ ընդգրկված է նրա շարքերում՝ Ա. Իսաբեկյանն ավելացրեց, որ «ի սկզբանե նորաստեղծ այդ քաղաքական ուժը շահեց իր խորին վստահությունը նրանով, որ այնտեղի ղեկավարությունը հիմնականում բաղկացած էր նախկինում քաղաքականությամբ չգրադված, եւ ամենակարեւորը՝ իրենց չվարկաբեկած անձանցից: «Ես մտածեցի, որ ժամանակն է ավելի ակտիվ լինելու,- ավելացրեց Ա. Իսաբեկյանը: Նրա խոսքերով՝ որպէս արվեստագետ նա կցանկանար սատարել ԲՀԿ-ին իր մշակութային քաղաքականության մեջ՝ խորհրդարան մուտք գործելուց հետո: «Հայաստանը պետք է ունենա առավել հզոր մշակութային քաղաքականություն, առավել ազդեցիկ նախարարություն, քանզի մեր երկիրը մշակութային է եւ հարուստ մշակույթով պետք է ներկայանա աշխարհին: Ներկայիս նախարարը կարծես մեծ աշխատանք է կատարում, սակայն նրան պետք է օգնել, մշակույթը ոտքի կանգնեցնելու համար անհրաժեշտ է թիմային աշխատանք,- ավելացրեց Ա. Իսաբեկյանը:

<https://armenpress.am/arm/print/439774/>